ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1119-Ա « 22 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի Հ.2911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ Հ.27 ԵՐԹՈՒՂՈՒ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՔԱՆԱԿՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 6-րդ մասով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով «Երևանտրանս» ՓԲԸ-ի 19.03.2024 թվականի հ.Ք-561 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 30-ի «Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը հաստատելու մասին» հ.2911-Ա որոշման՝ N 1 հավելվածում ընդգրկված ավտոբուսային հ.27 երթուղին շարադրել հետևյալ խմբագրությամբ.

27	ՆՈՐԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍ - ՀԵՌՈՒՍՏԱԿԵՆՏՐՈՆ Նորաշեն թաղամաս (ս.կ.) - Մելքումովի – Բեկ-Նազարյան - Բաշինջաղյան - Մարգարյան - Հալաբյան - Էստոնական - Շինարարների - Արզումանյան - Հալաբյան - Լենինգրադյան փողոցներ - Ծիծեռնակաբերդի խճուղի - Աթենքի փողոց՝ Հաղթանակ կամուրջ - Մաշտոցի պողոտա - Կորյունի - Չարենցի - Հերացու - Արմենակյան - Հովսեփյան փողոցներ - Հեռուստակենտրոն (վ.կ): Հետադարձը՝ նույնը մինչև Արմենակյան - Սարալանջի փողոցներ - Մյասնիկյան պողոտա- Հերացու - Կորյունի փողոցներ– նույնը մինչև Լենինգրադյան - Շինարարների փողոցներ - շարունակությունը նույն ուղեգծով:	34	100	20.4	11	13	9/10	11/8/3 9/6/3	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն

2.Հանձնարարել Երևան քաղաքի ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Երևանի ներհամայնքային ավտոբուսային հ.27 երթուղու համալրման աշխատանքների իրականացումը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ